# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում փարվույս հունիսի 24-ին տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Հայաստանի եպիսկոպոսների ու թեմակալ առաջնորդների միացյալ ժողով: Ժողովը քննության առավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական առաքելության, կանոնական, թեմական կյանքին առնչվող հարցեր:

Նկատի առնելով նաև հավատացյալների շրջանում շարունակվող անհանգստությունները՝ մասնավոր ուշադրությամբ քննության առնվեցին Հայաստանի Հանրապետությունում ներդրվող սոցիալական քարտերի համակարգի հետ կապված հարցեր ևս, որոնք նախապես քննարկվել էին նաև Աշխատանքի և սոցիալական ապահովության հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի աշխատակիցների և հանրության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքին:

Ժողովը վերահաստատելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշումը՝ արձանագրեց.

Սուրբգրային Հայտնությամբ և Եկեղեցու Ուղղափառ Հայրերի սրբազան ուսուցումների լույսի ներքո բացառելի է սոցիալական քարտի համարի որևէ առնչում «Նեռի դրոշմին»: Հայաստանի Հանրապետությունում ներդրվող սոցիալական ապահովության քարտերի համակարգը վտանգ չի պարունակում անձի հոգու փրկության առումով, քանզի Աստված և մարդ հարաբերությունները հոգևոր աննյութական աղերս են: «Հոգի է Աստված, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ. Դ 24):

Այսուհանդերձ, նկատի առնելով հանրության մեջ եղած տարակուսանքները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարության համապատասխան որոշմամբ բացառվել է «6» թվի երեք անգամ հաջորդական կրկնությունը սոցիալական ապահովության քարտերի համարներում և գծիկավոր պայմանանշաններում, որով նմանօրինակ փաստի արձանագրումը առաջացնելու է քրեական պատասխանատվություն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հորդորում է հավատավոր իր հոտին՝ տուրք չտալ նախապաշարումներին, այլ Տիրոջ Խաչի ապավինությամբ, զորացած հավատքով շարունակել իր կյանքը՝ ի շինություն մեր երկրի և ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: